քան բռնի իսլամացումներից յետոյ, վերջին պատերազմի սկզբին դարձեալ քսանուչորս Հայ գիւղեր գոյութիւն ունէին: Խոտորջուրն իր եօթն թաղերով, Սպեր-կենդրոնական, Կարմրիկ, Վ. եւ Ս. Փրթիկներ, Նիխախ, Կուդրաշէն, Խանթաձոր, Կաղմխուտ, Ծետկոնց, Մոխրկուտ Վ. եւ Ս., Կաբան, Բաղի, Թորոսենց, Բաղդասարենց եւ Փրտիկներ:

Զ.

Բանի եւ Պալխարի Հովիտը:

Ճորոխը Կիսկիմից դէպի հիւսիս ուղղուելով աջ կողմից ընդունում է նախ՝ Պալխար վտակը, որն սկսւում է Քաջկար կամ Քաջքար (10, 715′) լեռներից, որը Պալխար լեռնաշղթայի մի շարքն է, քառասուն կիլոմետր երկարութիւն ունի, քառասունի չափ առուակներ միանում են վտակին աջից ու ձախից մինչեւ Ճորոխին խառնունքը: Պալխարի ակունքում Քաջքարի լեռներում կայ մի փոքրիկ լճակ իր ճահիճներով, որ Յովտակ (Այղր) է կոչւում: Պալխար վտակը արեւմտա-հիւսիսից արեւելա-հարաւ է ուղղուած ակունքից մինչեւ խառնունքը: Առաջին մեծ առուակը, որ միանում է ձախից՝ Հինդկարին է, որ բղխում է Հինդկարի լեռներից, իջնում է միեւնոյն ուղղութեամբ Պալխարի հետ եւ միանում է 17—18 կիլոմետր առաջ գնալուց յետոյ Պալխար աւանի